ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ԴԵՄԻՐՉՅԱՆԸ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ

18.08.2021 16:06

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Սիմոն Բաբայանը 12.08.2021թ. գրավոր դիմում է ներկայացրել խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.4 կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ անդամի փոխարեն ներգրավվում է փաստաբանների պալատի խորհրդի անդամների վերջին ընտրության տվյալներով վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած փաստաբանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 18.08.2021թ. թիվ 165-Ա որոշմամբ արձանագրվել է, որ ***ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 07.03.2021թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած և որպես ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ներգրավվելու համաձայնություն ներկայացրած փաստաբան Գայանե Ասատուրի Դեմիրչյանը (285 ձայն, 9-րդ տող) 2021 թվականի օգոստոսի 18-ից (գրավոր համաձայնությունը ներկայացնելու հաջորդ օրվանից) համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կազմում Սիմոն Ալբերտի Բաբայանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:***

ՀՀ փաստաբանների պալատը շնորհակալություն է հայտնում փաստաբան Սիմոն Բաբայանին՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդում ծավալած երկարամյա և արդյունավետ գործունեության համար:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 18.08.2021թ. թիվ 165-Ա որոշումը.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&

parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })